Digitally signed by
GEGHAMYAN LILIT 7904840200
Date: 04.06.2025 12:35:17

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 07-01-2025 թ. որոշմամբ
««ԵՐԵՎԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԵՐԵՎԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐԳԻՇՏԻ 1 չկա
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00720
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2001-04-25
1.5 ՀՎՀՀ-ն		02528025
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94372224
		+(374)94888279
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		yerevan.himnadram@yerevan.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	95,812,095
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների իրականացման համար	106,227,500
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Դրամական օգնություն ֆիզիկական անձանց և կազմակերպություններին	82,813,857	
Օժանդակել Երևան քաղաքի բարեկարգմանը, կանաչապատմանը և կառուցապատմանը	239,882,971	
Օժանդակել տոնական, մշակութային միջոցառումների և ընդունելությունների կազմակերպմանը	13,072,300	
Օժանդակել Երևանի պատմաճարտարապետական հուշարձանների կառուցման և վերակառուցման աշխատանքներին	10,790,791	
Օժանդակել գիտականորեն հիմնավորված նոր ծրագրերի և առաջնակարգ տեխնոլոգիաների ներդրումը քաղաքային տնտեսության մեջ	22,251,890	
Օժանդակել քաղաքային տնտեսության համար մասնագետների վերապատրաստմանը	834,900	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	399,026,608	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	369,646,709	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 14 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԵՐԵՎԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Էջ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

26.05.2025թ.
N 022504

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Երևան» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Երևան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում եմ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածներից:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ

գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ.Պոնամարևա
26.05.2025թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություններ	2024թ.	2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ		21	144
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		21	144
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		168	168
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	4	10,458	12,449
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	5	155,879	352,866
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		166,505	365,483
Ընդամենը ակտիվներ		166,526	365,627
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		21	144
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		21	144
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	6	169,479	363,702
Ընթացիկ շահութահարկի գծոց պարտավորություն		386	5,141
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		169,865	368,843
Զուտ ակտիվներ		(3,360)	(3,360)
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		166,526	365,627

Ս. Մաքսապետյան

Տնօրենի ժ/պ

26□05.2025թ.

Լ. Գեղամյան

Գլխավոր հաշվապահ

1-13 ծանոթագրությունները կազմում են սույն հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություններ	**2024թ.**	**2023թ.**
Շնորհներից եկամուտ	7	387,963	67,143
Այլ եկամուտ	8	1	12,294
Ծրագրային ծախսեր	9	(372,542)	(69,693)
Վարչական ծախսեր	10	(22,327)	(22,269)
Գործառնական գործունեությունից արդյունք		**(6,905)**	**(12,525)**
Ֆինանսական եկամուտ	11	8,421	18,078
Արդյունք մինչև հարկումը		**1,516**	**5,553**
Շահութահարկի գծով ծախս	12	(1,516)	(5,553)
Տարվա արդյունք		**-**	**-**
Այլ համապարփակ արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ արդյունք		**-**	**-**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Դրամական միջոցների և դրանց համարժեքների տարեսկզբի մնացորդը	**352,866**	**226,955**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Աջակցություն հիմնադրամին	193,618	200,000
Այլ մուտքեր	1	2
Նյութերի ձեռք բերման գծով	(141)	(106)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(2,213)	(4,891)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(15,936)	(13,304)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ	(4,642)	(3,733)
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	(179)	(222)
Վճարված շահութահարկ	(6,270)	(2,000)
Ծրագրային ծախսեր	(369,647)	(80,684)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(205,409)**	**95,062**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տոկոսների ստացումից	8,422	18,077
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	12,772
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**8,422**	**30,849**
Ընդամենը դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսքեր	**(196,987)**	**125,911**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**155,879**	**352,866**

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան հիմնադրամը հիմնադրվել է 1997թ. հունվարի 10-ին:

Հիմնադրամի գործունեության նպատակն է.
- օժանդակել Երևան քաղաքի բարեկարգման, կանաչապատման և կառուցապատման աշխատանքներին
- օժանդակել Երևան քաղաքի պատմաճարտարապետական հուշարձանների պահպանմանը
- օժանդակել Երևան քաղաքի արտադրական կարողությունների զարգացմանը
- օժանդակել Երևան քաղաքի միջազգային կապերի զարգացմանը
- օժանդակել հովանավորության կարիք զգացող կրթական, մշակութային, կրթական, գիտական, մարզական կազմակերպություններին տոնական, մշակութային, մարզական միջոցառումների և ընդունելությունների կազմակերպմանը
- իրականացնել բարեգործություն՝ ցուցաբերել օգնություն դրամական և բնամթերային ձևով ֆիզիկական անձանց(ուսման, բուժման և այլ նպատակներով) և կազմակերպություններին

Հիմնադրամի մուտքերը հիմնականում գոյանում են կազմակերպությունների և անհատների նվիրատվություններից, ինչպես նաև Երևան քաղաքի բյուջեից:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (”ՖՀՄՍ”) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա բացառությամբ:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:
Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների ու ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը՝ համաձայն հաշվապահական հաշվառման միջազգային սկզբունքների, սովորաբար ղեկավարությունից այնպիսի գնահատումներ ու ենթադրություններ է պահանջում, որոնք ազդեցություն են գործում հաշվետվությունում ներկայացված ակտիվների ու պարտավորությունների գումարների և պայմանական ակտիվների ու պարտավորությունների բացահայտման վրա՝ ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների ու ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումները կիրառվում են հաշվապահությունում կասկածելի պարտքերի պահուստի, պաշարների հնացման, հիմնական միջոցների ու ներդրումների փոխհատուցման, մաշվածության, եկամտի ճանաչման, հարկերի ու պայմանական հոդվածների համար: Գնահատումներն ու

ենթադրությունները պարբերաբար ուսումնասիրվում են և արդյունքները արտացոլվում են այն տարվա ֆինանսական հաշվետվություններում, որում դա անհրաժեշտ է համարվում:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Տոկոսներից ստացված եկամուտը, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը ճանաչվում է տոկոսների հաշվեգրման հետ:

Շնորհներից եկամուտների և ծախսերի ճանաչում

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված բոլոր հոդվածները չափվում են հայկական դրամով , որը հանդիսանում է Հիմնադրամի հիմնական արժույթ:
Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:
Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը և վնասը ճանաչվել է ուղղակիորեն սեփական կապիտալում:
Ստորև ներկայացվում են տարեվերջյան փոխարժեքները.

	31 Դեկտեմբեր 2024	31 Դեկտեմբեր 2023
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 ԵՎՐՈ	413.89	447.90

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Սկզբնական արժեքն ընդգրկում է ակտիվներն իրենց նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված բոլոր ծախսումները:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով:
Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:
Հիմնական միջոցների իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն, և ներառվում է ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվության մեջ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆոնդերի աղբյուրների և դրանց օգտագործման մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք ԱՄԱԵ մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Արժեզրկում

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվեկշռի ամսաթվի դրությամբ վերանայում է իր ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ գնահատելու համար, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվները կարող են արժեզրկված լինել: Եթե առկա են այդպիսի հայտանիշներ, ապա Հիմնադրամը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարները արժեզրկումից կորուստների (եթե առկա են այդպիսիք) չափը գնահատելու համար:
Փոխհատուցվող գումարն ակտիվի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև նրա վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կհաշվարկվեր, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Կանխավճարներ և դեբիտորական պարտքեր

Կանխավճարները մատակարարներին և կապալառուներին պայմանագրի իրագործման սկզբում վճարված կանխավճարներն են: Այս կանխավճարները աստիճանաբար նվազեցվում են պայմանագրի իրագործման յուրաքանչյուր փուլում:

Դեբիտորական պարտքերի պահուստավորումը կատարվում է դրանց կասկածելի դառնալուն պես:

Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով: Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում նաև ստացված կանխավճարները:

Հարկեր

Հարկերը հաշվարկված են ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Շնորհներ

2023թ. ֆինանսական տարվա ընթացքում Հիմնադրամն իրականացրել է դրամաշնորհային ծրագրեր:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ:
Եկամուտներին վերաբերող շնորհները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են առանձին:

4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԵՎ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Տրված կանխավճարներ	10,992	13,770
Պետական բյուջեի գծով կանխավճարներ	2,698	1,903
Այլ վճարների գծով կանխավճարներ	128	136
	13,818	**15,809**
Արժեզրկման պահուստ	(3,360)	(3,360)
	10,458	**12,449**

Հիմնադրամը արժեզրկել է «Անդին Ա» ՍՊԸ-ին տրված կանխավճարը: Հիմնադրամը հայց է ներկայացրել ընդեմ «Անդին Ա» ՍՊԸ-ի գումարը բռնագանձելու համար:

5 ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ԴՐԱՄԱՐԿՂՈՒՄ ԵՎ ԲԱՆԿԵՐՈՒՄ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Կանխիկ դրամ	-	204
Անկանխիկ դրամական միջոցներ բանկերում	155,879	352,662
	155,879	**352,866**

6 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Մնացորդը առ 01 հունվար	**363,702**	**226,998**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	193,618	200,000
Տարվա ընթացքում օգտագործված շնորհներ	(387,841)	(63,296)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**169,479**	**363,702**

7 ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Նվիրատվություններից եկամուտ	387,840	63,296
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	123	3,847
	387,963	**67,143**

8 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Այլ պաշարների օտարումից եկամուտներ, զուտ	-	12,294
Այլ եկամուտներ	1	-
	1	**12,294**

9 ԾՐԱԳՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Հիմնական միջոցների մաշվածություն	110	3,356
Նվիրատվություններ	372,432	66,337
	372,542	**69,693**

10 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	19,961	17,240

Հիմնական միջոցների մաշվածություն վարչական	13	13
Աուդիտի ծախսեր	1,680	720
Մասնագիտական ծառայություններ	-	3,000
Այլ	673	1,296
	22,327	**22,269**

11 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Բանկային հաշիվներից տոկասային եկամուտ	1,481	715
Տոկոսային եկամուտ ավանդներից	6,940	17,363
	8,421	**18,078**

12 ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	1,516	5,553
	1,516	**5,553**

13 ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են, հիմնական ղեկավար անձնակազմը: Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է աշխատակիցներին հատուցումներում:

(հազար դրամ)

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված գումարներ	7,306	5,478
	7,306	**5,478**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 04.06.2025 12:28